

ՆԿԱՐԱԳՐԻ

իերէս յոյն իմաստափրին մարդկային կենաց
պատկերը¹:

ԱԱՏՈՒՌՆՈՍԻ տաճարին մէջ երբ օր
մը կը քալէինք, տեսանք որ այն աստու-
ծոյն նուիրած ուրիշ ընծայից հետ պատ-
կեր մ'ալ կար անոր բազնին առջեւը:
Այս պատկերիս նիւթը անծանօթ բան
մը կ'երևար, և կը թուեր թէ մասնաւոր
այլաբանական նշանակութիւն մը ու-
նենայ. սակայն չէինք կրնար իմանալ
թէ ով է հեղինակը և թէ ինչ բան կը
նշանակէ. որովհետեւ պատկերին մէջ ոչ
քաղաք կը տեսնուեր և ոչ դաշտ. հա-
պա մէկ շրջափակ մը, որուն մէջ ուրիշ
երկու շրջափակ ալ կային, մէկը մեծ և
մէկալը աւելի պղտիկ: Դրան առջեւը
խուռն բազմութիւն մը կը տեսնուեր,
շրջափակին մէջն ալ շատ մը կանայք:
Դոջի շրջափակէն դուրս ծերունի մը
նկարուած էր, որ կարծես թէ ներա
մտնողներուն հարկաւոր եղած ազդա-
րարութիւններն ու խրատը կու տար:

Դրբոր մենք երկար ատեն մտածե-
լով ու չէինք կրնար այս այլաբանութե-
բուն իմաստը հասկընալ, մեզի մօտ կե-
ցող ծերունի մը “ Վմենեին զարմանա-
լու բան չկայ, ըստա, թէ որ այս պատ-
կերիս նշանակութիւնը իմանաք. սա-
կայն քիչ մարդիկ կան որ զիանան. և այս
նուերը քաղաքացիններէն եղած չէ Աա-
տուռնոսի. հապա ժամանակաւ մէկ ի-
մաստուն մարդ մը այս քաղաքս եկաւ,
որ թէ խօսքերովն ու թէ վարքովլս Պար-
մենիդեայ և Պիւթագորայ հետեւղ
իմաստասէր մըն էր, և ինքը ընծայեց

1 Կերէս յոյն իմաստասէրը Բիովտիոյ թերէ
քաղաքը ծնած է Քրիստոսէ 460 տարի տարշ:
Դիսգինէս լյայերտացի, որ իմաստասիրաց վարքը
գրած է, կ'ըսէ թէ երեք տրամախօսութիւն շա-
րագրած ըլլայ կերէս, որոնցմէ երկուքը կոր-
սուած՝ և միայն հրատարակածնիս ձեռուընիս հա-
սած է: Բարոյական այլաբանութիւն մըն է ասի-
կայ, որուն մէջ բաղդն, գիտութիւն և կրքերը ան-
ձնաւորած է, և իրեն գլխաւոր նպատակ դրեր է
առաքնութիւնը սիրել ընել, և կրից վասները
ցուցնելով զգուշացընել:

Աատուռնոսի այս պատկերը: Ես իմ
տղայութեանս հասակին մէջ զինքը տե-
սած և վրան զարմացողներէն մէկն էի.
և այս պատկերին մեկնութիւնը շատ
անգամ լսեր եմ իրմէն, : Ես որ լսե-
ցինք, սկսանք աղաշելոր եթէ հարկա-
ւոր զբաղմունք մը չունի՝ յանձն առ-
նու մեր հետաքրքրութիւնը լեցընել,
որովհետեւ շատ կը փափաքէինք մեկ-
նութիւնը իմանալ:

Դարունին դարձաւ “ Շատ աղէկ,
ըստ, կրնամգոհ ընել զձեզ. սակայն
այս ալ հարկաւոր կը սեպեմառաջնուց
ձեզի զրուցել որ ըրած պատմութիւնս
իրեն վնասներն ալ ունի. վասն զի թէ
որ պէտք եղածին ալս մտիկ ընէք և
կարենաք ըստա հասկընալ, երջանիկ
և իմաստուն մարդիկ կ'ըլլաք. չէ, թէ
որ հակառակը պատահի, անմիտ, ար-
գէտ, բիրտ և թշուառ կ'ըլլաք. և
կեանքերնիդ ալ ձեզի կը դառնանայ:
Եւ յիրաւի. այս պատկերիս մեկնու-
թիւնը այն հանելուկին կը նմանի որ
հին ատեն Ափինքո՝ անցաւորաց կ'առա-
ջարկէր. ով որ կը լուծէր՝ կը փրկուէր.
և գտնել չկրցողը՝ նոյն հրեշին կատա-
զութեանը զօհ կ'ըլլաք: Դրեթէ նոյն
բանն է նաև այս պատմութեան մէջ
ալ. Ափինքս մըն է անմտութիր՝ մարդ-
կային կենաց մէջ, որ գրեթէ խորհընը-
դաւոր առագաստի մը տակ կը ծածկէ:
մեր կենաց բարի ու չար գործողութի-
ները: Ավ որ այս առագաստին թաք-
նութիւնը չկարենայ իմանալ, Ափին-
քայ պէս մէկէն 'ի մէկ չապաններ, հա-
պա կամաց կամաց անոր կենդանութէ
շունչը իրմէ կը քաղէ, ինչպէս բանտի
մէջ նստած պարտաւոր մը՝ որ օր օրուան
վրայ իր դատակներոյն սպասելով կը հա-
լի ու կը մաշի: Խակ թէ որ հանելուկին
իմաստը կարենայ բացատրել, անմտու-
թիւնն ալ մէկէն կը կրտսուի. և մարդ
անոր գահավէժ բերմունքներէն ազա-
տելով բոլոր կենացը մէջ հաստատուն
խաղաղութիւն մը ձեռք կը ձգէ „:

Դարունին երբոր տեսաւ որ մեր հե-
տաքրքրութիւնը ալ աւելի կը շատնար,
ձեռք առաւ իր պղտի գաւազանը, ու

պատկերին վրայ ցուցընելով “ Այս նկարին մէջ ձեր տեսած շրջափակը , ըստ , կեանս կը կոչուի . և այն բազմախոռուն մարդիկն ալ անսնք են որ ներս կ'ուզեն մանել . իսկ դրանք քով կեցած ծերունին , որ մէկ ձեռքը թուղթ մը բռնած է , ու մէկալովը բան մը կը ցուցընէ , Ոգի կ'անուանի . ինքն է որ ներս մտնողներուն կը սովորեցընէ թէ ինչ ձամբայ պէտք է բռնեն թէ որ չեն ուզեր կորսուիլ , : Հարցուցինք թէ ինչ ձամբայ է իրեն սորվեցուցածը : ” “ Այեցէք , ըստ , պատկերին վրայ , ու կը տեսնաք որ բազմութեան ներս մանելու համար սահմանուած գրան մէջ՝ փառաւոր գահոյից վրայ կին մարդ մը նստած է , որ համոզիչ ու պատրողական կերպարանք մը ունի , ձեռքն ալ բաժակ մը . ասի կայ է խաբեութիւն՝ որ կը պատրէ կը մոլորեցընէ զմարդիկ , ու մոգական հրապուրիչ ըմակելիքով մը զանսնք կը գինով ցընէ . և այն ըմակելիքն են Սխալուան և Տգիտութիւն . կը խմեն ու շրջափակէն ներս կը մտնեն : Ինքը խաբեութիւնն ամենուն առատաբար կը մատուուակէ այն մահաբեր դեղը . բայց կան մարդիկ որ շատ կը խմեն , կան ալ որ քիչ : Անկէց քիչ մը անդին խումբ մը կանանց կեցած են որ կարծիր , կիրտ և հելլութիւն կ'ըսուին . և իրենք պատրաստ կեցած են՝ որ մարդիկ ներս մտնելնուն պէս վազեն վրանին , բռնեն ու զոմանս տանին ’ի փրկութիւն , բազմագոյնքն ալ ’ի կորուստ : Ակայն ամենուն ալ բերանը մեծամեծ խոստմունք կան թէ բարույ առաջնորդք են և երջանկութեան ու բաղդի պիտի հասցընեն : Այս խեղձերն ալ որ խաբեութեան բաժակին թոյնը խմած են , չեն կրնար գտնել ծխարիտ և ուղիղ ձամբայ մը հետեւելու . և ասդիս անդին կը մոլորին : Այս կը տեսնէք ահաւասիկ պատկերին մէջ որ անկանոն ընթացք մը ունին և իրենց առաջնորդող կանանց հաճոյիցը համեմատ կը թափառին :

“ Անկէց քայլ մը անդին խեղձ կոյր մը կը տեսնէք , որ քարեայ զունախ մը վրայ նստած է . ինքն է բարձը , որ ոչ

միայն կոյր , հապա նաև խուլ և անմիտ է . որ ասդիս անդին խարխափելավ կ'երթայ , մէկուն ունեցածը ցունեցածը կը յափշտակէ , որսէս զի ուրիշ մը հարը տացընէ . անոր քովէն ալ՝ շատ ատեն շանցնիր՝ դարձեալ առջի տուածը ետ կ'առնու . այն պատճառաւ ալ գունտի մը վրայ նստած է , յեղյեղուկ ու փոփոխական բարքը ցուցընելու համար . և թէ որ մէկը իրեն վստահի , անկումն ալ աւելի սոսկալի ու աւելի վնասաբեր կ'ըլլայ : Այս կոյր բազդին քովն ալ անմուաց բազմութիւն մը կը տեսնուի , որոնց ամէն մէկը իրեն այն բարիքը կը ինդղիւն զորոնք դիպուածով կը բաժնէ : Բայց այն մարդիկին երուն մէջ ալ ումանք ուրախ երես կը ցուցընէն , ուրիշներն ալ յուսահատ դաւանազէտ վշտաց մատնուած կ'երեւնուն : Ուրախ երես ունեցողները անսնք են որ բազդէն բարիք մը ընդուներ և վրան կը զուարճանան , և իրենք զիրենք բարեխաղդ կը կուեն . իսկ ուրիշներն որ արցունք կը թափիւն , կամ անսնք են որ ունեցածնին կորարնցուցեր են , և կամ դեռ խնդիրքնին չեն ընդունած . և ասնք են Զարաքաղդ կիմ Դժբաղդ ըսուածները . : Այս ատեն հարցուցինք թէ այս ինչ տեսակ ընծայք պիտի ըլլան բազդին ընձեռածները , որ ձեռք ձգողներուն այնչափ ուրախութեան ու կորսընցընուղներուն ալ շափազանց տրտմութեան պատճառ ըլլան : ” Ազդին տուած պարգևները , կըրկնէց ձերունին , այնպիսի բաներ են որ միայն մարդուս աչքին առջեւը բարիք կը սեպուին , ինչպէս հարստութիւն , փառք , ազնուականութիւն , որդիք , իշխանութիւնք , թագաւորութիւնք և ասոնց նման ժառանգութիւնք : Պիտի հարցընէք թէ ասոնք հարստութիւնք չեն . այս բանիս պատախանը ուրիշ առթով մը կը լսէք . հիմկու հիմա այս պատկերին վրայ մտագրութիւն ըրէք :

“ Առջի դուռը անցնելէդ ետքը՝ ուրիշ շրջափակ մ'ալ կու գայ , և գուրաը հագուած սըգուած կանայք կեցած են . ասոնցմէ մէկը կ'ըսուի Անբարեխառնութիւն , մէկալը թուլամորթեռնութիւն , միւս

Երկուքն ալ Ագահութիւն և Շաղութեռ
թիւն . օրոնք կեցած կը դիտեն կը նային
թէ ինչ բաներ ձեռք կը ձգեն մարդիկ
բաղդին շնորհիւը . ետքեն իրենք ալ
կը սկսին անոնց շողոքորթել , սէր ու
ինամք ցուցընել վրանին , ու փափաք
մը յարկակից և բնակակից ըլլալու .
կենաց քաղցրութիւն ու մշտնջենաւոր
վայելք կը խոստանան : Իշխէ որ մէ-
կը անոնց սուտ խօսքերէն խաբուի , ու
ինքզինքը հեշտութեանց ու վայելից
տայ , առջի բերան կը կարծէ թէ եր-
ջանկութեան հասած ըլլայ . չգիտեր
թէ վայելք ըսածդ անցաւոր և անէակ
բերկութիւն մըն է : Ի՞այց երբոր իր
թմրութիւնը անցնի , կը տեսնէ որ հա-
ջոյք կարծուածը վիշտը են ու նախա-
տինք . բաղդին տուածը շուայլէ ու վատ-
նէ , և այս կանանց բռնութենէն չու-
զենայ խալըսիլ , հարկ կ'ըլլայ որ ին-
չուան ապօրինաւոր ճամբաներ բռնէ
զիրենք հաճելու համար , ստերդմունի
և սեղանակապտութիւն ընել : Իշխ եր-
բոր այս ամէն ախտերը համարձակ կա-
տարէ , Զիղջ կիմ Աղալաւ ըսուածը այն
ատեն վրայ կը հասնի : Իշխ ահաւասիկ
կը տեսնէք այս պատկերին մէջ որ կա-
նանցմէ քիչ մը ետքը նեղ ու խաւար-

չտին բանաւ մը կայ . Հոն կեցած է Ա-
պաշտաը , քովն ալ Տրամութիւնը՝ գլուխը
ինչուան ծնկան վրայ խոնարհած , և
ջառը՝ որ մազերը կը փետտէ , քիչ մ'ալ
անդին Ոլյը , և անոր եղթայրը Յուսու-
հագութիւն , մերկ , տակ և անկերպա-
րան : Հոն այն դահիճներուն ձեռքը
պիտի մասնոււին օրոնք որ իրենց հա-
ջոյիցը ետևէն կ'ըլլան . Հոն պիտի տու-
ժեն մշտնջենաւոր տանջանքով : Ինկէ
ալուրիշբանտի մը մէջ կ'իյնան , Թջուտ-
ուաթեան արգելանը . ուր բոլոր իրենց
կեանքը պիտի անցընեն , թէ որ պա-
տահմամք Ուղղութիւնը իրենց չհանդի-
պի : Ի՞յս բաղդին որ ունենան , զիրենք
այն խիստ գերութենէն կ'ազատէ , և
անոնց նոր յօժարութիւններ և նոր
կարծիք թելադրելով՝ առջենին երկու
Ճամբայ կը ցուցնէ , որոնց մէկը Ճշմա-
րիտ ուղղութեան կ'առաջնորդէ , մէ-
կայն ալ ստոյն : Ուաէ որ Ճշմարտին հե-
տևին , երջանիկ են . վասն զի Ճամ-
բուն գժուարութիւններն ու նեղութի-
ները զիրենք չյուսահատցըներ , և խա-
ղաղ կեանքով մը մնացած օրերնին
կ'անցընեն , :

(ՊԻՑԻ ՀԱՐՈՒՆԱԿՈՒ)

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Ոստա լեռն ու Պետեն գետը :

Գեղորէք , գետք ՚ի հովիտս ինձ բաղցրասցին վըտակահոսք ,
Ծղիսոխով ջուրց սիրեցից և ըգմայրիս՝ անփառունակ :
Ո՛չ , ուր դաշտք և ըլլակեր և Տայիգետ գեղապարեալ
ի կուսից լակոնուչեաց , ու ՚ի հովասուն ծործորս Հեմեայ
Ո՞վ տարցի զիս և ոստովք պաշտպանեսցէ մեծ հովանեաւ :

Այսպէս կ'երգէր Ա իրգիլիոս՝ յիշե-
լով Ուեսազիոյ , Լ ակոնիոյ ու Օմրակիոյ
գեղեցկատեսիլ ու զուարճալի հովիտ-
ներն ու դաշտերը : Իշխ իրաւցընէ այն
տեղուանքը՝ զորոնք բնութիւնը մասնա-

ւոր ինամքով մը զարդարեր էր , զիցա-
բանական առասպելներով ու յոյն քեր-
թողաց աշխոյժ նկարագիրներովն ու գո-
վաբանութեամք այնպիսի համբաւ մը
ունեցան՝ որ անուննին միայն ընթերցո-
ղաց միտքը զուարճալի ու ախորժ զգաց-
մամք ու երևակայութեամք կը լեցու-
նէ : Իսոնց մէջ ալ ամենէն անուանին է

* Ալբակ . Մշակ . Գիրք Բ . 488-492 (Թարգ
մանութիւն Բագրատունոյն) :